## Խաղ՝ I, քարտ № 1





1. Գրի՛ր նկարներում պատկերված առարկաների անունները:

2. Այդ բառերից յուրաքանչյուրի հնչյուններով կազմի՛ր նոր բառեր:

3. Որոշի՛ր, թե ***մատիտ*** բառից առանձնացված հետևյալ հնչյունախմբերից որո՞նք են բառեր և ինչո՞ւ. *մատ, տատ, մի, տատի, տիտ, միտա, իմ, տմատ*:







1. Գրի՛ր նկարներում պատկերված առարկաների և գործողությունների անունները:

2. Գտի՛ր այդ բառերին *իմաստով մոտ* ուրիշ բառեր:

3. Խմբավորի՛ր *իմաստով մոտ ձի, կառուցել, վազել, նժույգ, պարտաստել, երիվար, շինել, սլանալ* բառերը:

Խաղ՝ **IV**, քարտ № **2**





1. Գրի՛ր նկարներում պատկերված առարկաների անունները:
2. Գրի՛ր ուրիշ ***հագուստների*** անուններ:
3. Այդ բառերից յուրաքանչյուրը քանի՞ հնչյուն և քանի՞ տառ ունի:

1. Կարդա՛.

*- Լսի՛ր, մայրիկ, ո՞վ է այնտեղ*
*Տխուր ձայնով ճռճռում,*
*Վա՜յ, ծիտիկն է սոված, սառած.*
*Ուտելիք է նա խնդրում:*

(Հ. Հայրապետյան)



2. Ոտանավորի միջից դո՛ւրս գրիր ***ո՞վ*** և ***ի՞նչ*** հարցերին պատասխանող բառերը:

3. Որոշի՛ր, թե ի՞նչ հարցերի են պատասխանում *առարկա* ցույց տվող հետևյալ բառերը.

***տուն, խաղալիք, բժշկուհի, աշակերտ, բանվոր***:

## Խաղ՝ VI, քարտ № 3

1. Կարդա՛.

*Ե՛վ կակաչ սպիտակ,*
*Ե՛վ մեխակ կարմիր,*
*Հասմիկ, նունուֆար՝*
*Ելած հանդեսի...*



2. Ոտանավորի միջից դո՛ւրս գրիր ծաղիկների անունները, դրանց ավելացրո՛ւ նորերը:

3. Ընդգծի՛ր, ապա ճիշտ ուղղագրությամբ գրի՛ր այն բառերը, որոնք նաև մարդկանց անուններ են:

4. Այդ անուններից երեքը գործածի՛ր նախադասությունների մեջ: